

**ԹՅՄՅ ԵՐԻ ՕՐԻ ԱՕՒՍԱՕՍ
ԹՅՄՅ ԵՐԻ ՅՄԵԹ ՅՄԵԹ ՅՄԵԹ ՅՄԵԹ ՅՄԵԹ ՅՄԵԹ
ԻՅԾՂԻ ԱԾԱՕԹ ՅՄՈՍՅ ԱՅՕՒՅ
2008 ԱՅ ՅԻ ՅՄԵ ՂԱԾԻ ԱՕՍՕ ԱՕՒՍՅ Յ**

Նախաբան

Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (միայն սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արտորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքներով և Նայաստանի Նանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2008 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ
Մուշեղ Կոչեցյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (107 աշխատող, այդ թվում՝ 78 քաղաքացիական ծառայող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
 - ա) սակագնային բաժին,

- բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
- ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
- բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին:

Նանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման իրավական դաշտի կապարելագործում

Կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի կապարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը:

Նանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Փոստային կապի մասին» ՆՆ օրենքում փոփոխություններ և լրացումներ կապարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՆՆ օրենքում փոփոխություն կապարելու մասին», «Պեղական տուրքի մասին» ՆՆ օրենքում փոփոխություն կապարելու մասին» Նայասրանի Նանրապետության օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

Նաշվի առնելով էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների մաս կազմող կարգերի կիրարկման ընթացքում առաջ եկած խնդիրները, լրամշակվել են էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը և էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի արտադրման և բաշխման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը:

Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների կիրարկումն ապահովելու համար մշակվել և հաստատվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարների հաշվարկման մեթոդիկան, կապարվել են անհրաժեշտ փոփոխություններ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ընթացակարգի և միացման վճարների գանձման վերաբերյալ առաջացած մի շարք հարցերին լուծում տալու նպատակով հանձնաժողովն ընդունել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու պայմանների և նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարների պաշտոնական պարզաբանման վերաբերյալ որոշումը:

2008 թվականին մշակվել և հաստատվել է «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևը:

Ի կատարումն «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի պահանջների, մշակվել և հաստատվել է բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգը, որը հիմք կհանդիսանա «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համար՝ կազմելու անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում սպառողների գազամատակարարման սահմանափակումների ծրագրերը:

Լրամշակվել և հաստատվել են նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններն ու էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը:

2. Լիցենզավորում

Նանձնաժողովը 2008 թվականի ընթացքում սրացել է էներգետիկայի բնագավառում բարդ ընթացակարգով լիցենզավորման՝ 29 և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարզ ընթացակարգով լիցենզավորման՝ 89 հայր: Քննարկումների արդյունքում էներգետիկայի բնագավառում տրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 15, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի փոխադրման ցանցի կառուցման՝ 2, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման՝ 1, կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 9 լիցենզիա:

Էներգետիկայի բնագավառում սրացվել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 24 հայր, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն համաձայնություն տալու՝ 24, գույքն օտարելուն համաձայնություն տալու՝ 4, բաժնետոմս կամ բաժնետաս վաճառելուն համաձայնություն տալու՝ 6, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու՝ 1, փոքր հիդրոէլեկտրա-

կայանի կառուցման համար անհրաժեշտ հիմնական գույքի նկատմամբ իրավունքները փոխանցելուն համաձայնություն պալու՝ 1 դիմումներ, որոնք սահմանված կարգով քննարկվել և բավարարվել են:

Ջրային համակարգում ընդունվել է ջրային համակարգի օգտագործման թույլտվություն մեջ փոփոխություն կատարելու և ջրային համակարգի օգտագործման թույլտվություն փրամադրելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ մեկական դիմում:

Նայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ, իսկ բարդ ընթացակարգով փրված գործունեության լիցենզիաների համար մշակվել և հաստատվել են գործունեության պայմաններ:

Նայասպանի Նանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգի համաձայն՝ լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար 22 լիցենզավորված անձինք հանձնաժողովի համապատասխան որոշումների համաձայն՝ որպես ֆինանսական փուլժ, ընդհանուր գումարով շուրջ 68,7 միլիոն դրամ են փոխանցել Նայասպանի Նանրապետության պետական բյուջե:

2008 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից էներգետիկայի բնագավառում և ջրային համակարգում լիցենզիաների և թույլտվությունների փրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման համար փուլքերի գանձման արդյունքում Նայասպանի Նանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 197,2 միլիոն դրամ գումար պետական փուլք:

3. Սակագնային քաղաքականություն

1. Էներգետիկայի բնագավառ.

2008 թվականին մշակվել է էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկապնդեսական տեղեկատվության ներկայացման կարգը և լրամշակվել են համապատասխան ձևերը:

Լրամշակվել են նաև գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկապնդեսական տեղեկատվության ձևերը:

2008 թվականի մայիսի 1-ից բնական գազի սպառողների օգտին Նայասպանի Նանրապետության կառավարության կողմից «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ին վճարվող սուբսիդիայի դադարեցման հերևանքով վերանայվել են ջերմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները: Միաժամանակ,

Էլեկտրաէներգետիկական համակարգի կայունությունն ապահովելու, ինչպես նաև վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճը կանխելու նպատակով վերանայվել են «Որոտան ՆԷԿՏ» ՓԲԸ-ի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները: Վերանայվել են նաև «Նայկական արոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին առաքվող ջերմային էներգիայի սակագները:

Նանձնաժողովի կողմից հաստատված՝ օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկայի համաձայն՝ սահմանվել է բարձր արդյունավետության տեղակայանքներում օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված եղանակով արտադրվող և առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը:

Նաշվի առնելով նույն մեթոդիկայով նախատեսված վառելիքի գնի փոփոխությամբ պայմանավորված սակագնի ճշգրտման իրականացման բանաձևը, վերանայվել է «Երևանի Մխիթար Ներսիսյան անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ում տեղակայված ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրությամբ կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Նաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 9 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայաններից և «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նաշվի առնելով փոքր հիդրոէլեկտրակայանների 2007 թվականի և 2008 թվականի առաջին կիսամյակի փաստացի ֆինանսատնտեսական ցուցանիշները, լրամշակվել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան:

2008 թվականի վերջին, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ ճշգրտվել են կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները և վերահաշվարկվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 34 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

«Նայասփանի Նանրապեպոյթյան հանրային ծառայութիւնների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՏՏ օրենքի պահանջներից ելնելով, փարեվերջին ճշգրտվել և հաստատվել է կարգավորման պարտադիր վճար վճարողների 2009 թվականի անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հաշվարկվել են կարգավորման պարտադիր վճարների փարեկան մեծությունները:

Ուսումնասիրվել և հաստատվել են նաև երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2009 թվականի պայմանագրային և փնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2009 թվականի ապրիլի 1-ից հանրապեպոյթյուն ներկրվող բնական գազի գնի թանկացման, ինչպես նաև 2007-2008 թվականներին գազամատակարարման համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման, գազամատակարարման ընդլայնման հետ կապված որոշ շահագործման և պահպանման ծախսերի փոփոխման հետևանքով, 2009 թվականի փետրվար ամսին վերանայվել են սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բաշխման և փոխադրման սակագները:

Միաժամանակ, հիմք ընդունելով ջերմային էլեկտրակայաններին վաճառվող բնական գազի նոր սակագինը, ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի մեծությունը, 2008 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոններ, 2009 թվականի փետրվար ամսին վերանայվել են նաև սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի, արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:

2. Զրային համակարգ.

2008 թվականի փետրվար ամսին «Երևան Զուր» ՓԲԸ-ն սակագների ճշգրտման առաջարկով դիմել է հանձնաժողով՝ հիմք ընդունելով բազիսային սակագների ճշգրտման մեթոդաբանությունում ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, փարեկան սղաճի, եվրո / դրամ փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ՝ հաշվարկային փարում փեղի ունեցած փոփոխությունները: Մանրածախ ջրամատակարարման ծավալների հիմնավորման նպատակով իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքների վերլուծության հիման վրա ընկերության ներկայացրած 2007 թվականի սակագների ճշգրտման նպատակով հաշվառվող մանրածախ ջրամատակարարման ծավալը ավելացվել է շուրջ 3.43 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ

ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, հաճաժողովն ընկերության առաջարկած 10.95 դրամի (առանց ԱԱՏ -ի) փոխարեն սակագնի ճշգրտման ընդունելի մեծություն է համարել 7 դրամը (առանց ԱԱՏ -ի), որից 3 դրամը փեղափոխվել է 2010 թվականի, իսկ 4 դրամը՝ 2011 թվականի բազիսային սակագների վրա՝ անփոփոխ թողնելով 2008 թվականի սակագները:

2008 թվականին «Նայջրմուդկոյուդի» ՓԲԸ-ն սպառողներին խմելու ջրի մաքակարարման և ջրահեռացման ծառայությունների մաքուր ցման սակագների վերանայման հայր է ներկայացրել հանձնաժողով՝ առաջարկելով վերանայել միայն մանրաձախ ծառայությունների մաքուր ցման սակագները: Նայքը մանրամասնորեն ուսումնասիրվել և քննարկվել է «Նայջրմուդկոյուդի» ՓԲԸ-ի և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նաշվի առնելով ընկերության ֆինանսաբնութսական գործունեության արդյունքները, միջին աշխատավարձի մեծության ավելացման անհրաժեշտությունը, ինչպես նաև Նայասրանի Նանրապեքության պեքական բյուջեից հարկացվելիք սուբսիդիավորման կրճատումը, 2009 թվականի փեքրվար ամսին վերանայվել են «Նայջրմուդկոյուդի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մաքակարարման և ջրահեռացման ծառայությունների մաքուր ցման սակագները:

3. Նեռահաղորդակցության բնագավառ.

Նաշվեքու քարում հանձնաժողովը, համագործակցելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հեք, գգալի աշխատանքներ է իրականացրել հանրային էլեքքորոնային հաղորդակցության ծառայությունների սակագների կարգավորման իրավական դաշքի կարարելագործման ուղղությամք: Մասնավորապես, մշակվել և հասքարվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մաքուր ցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեքքորոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը, ծախսերի բաշխման մեթոդաբանությունը և մաքուր ցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան:

4. Երկաթուղային քրանսաքորքի բնագավառ.

2008 թվականի հուլիսի 1-ից ուժի մեք է մքել «Երկաթուղային քրանսաքորքի մասին» Նայասրանի Նանրապեքության օրենքի 11-րդ հոդվաժը՝ հանձնաժողովին վեքապահվաժ լիագորությունների մասով, որը հիմք ընդունելով՝ մշակվել և հասքարվել է ընդհանուր օգքագործման երկաթուղային քրանսաքորքի ենթակառուցվաժքի օգքագործման վճարների սահմանման և վեքանայման կարգը:

5. Տրանսաքորքային միքոցների պարքաղիք քեխնիկական գննության անցկացման բնագավառ.

2008 թվականի հունվարի 19-ից ուժի մեջ է մտել «Տեխնիկական արափորոշման միջոցներով փրանսպորտային միջոցների պարփաղիր փեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՏՏ օրենքը: Օրենքի պահանջներից ելնելով, հաշվետու փարվա ընթացքում մշակվել և հաստատվել է փեխնիկական արափորոշման միջոցներով փրանսպորտային միջոցների պարփաղիր փեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման կարգը:

4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, հանդիսանալով հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և փեղեկատվությունների հիման վրա գնահատել ընկերությունների, ինչպես նաև փյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը և, որ ամենագլխավորն է, սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական փյալների բազա: Այս առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ փարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Նշված համակարգն արդեն ներդրվել է էլեկտրատնտեսագրիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում:

Այդ առումով 2008 թվականի ընթացքում լրամշակվել են խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

2008 թվականին հաստատվել է «Նարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը:

Նանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ջրային համակարգի, էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և «Նայփոստ» ՓԲԸ-ն ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են ընկերությունների ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը շարունակելու է իր ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկապրեսական ցուցանիշները:

5. Մաքուցվող ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է նաև սպառողներին մաքուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գնահատումն ու կարգավորվող ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանումը:

Սկսած 2007 թվականից, «Նայասարկման և որակի ցուցանիշների» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրի համաձայնեցման հետ մեկտեղ սահմանվում են նաև սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ծրագրային մեծությունները: 2008-2010 թվականների ներդրումային ծրագրի համար այս մեծությունները սահմանվել են յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացում նման մոտեցման նպատակը ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերն ավելի նպատակային դարձնելը և հետագայում դրանց արդյունքները ճիշտ գնահատելն է:

2008 թվականին հանձնաժողովը փոփոխել է «Նայջրմուղկոյուղի» և «Երևան Զուր» ՓԲԸ-ների ջրամատակարարման տևողության նվազագույն պահանջները, ինչպես նաև հասարակել «Նայջրմուղկոյուղի», «Երևան Զուր» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների 2009 թվականի ջրամատակարարման տևողության ցուցանիշների ծրագրային մեծությունները:

2008 թվականին հանձնաժողովը շարունակել է իրականացնել «ՆայԲուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի գնահատման վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը և հանձնաժողովի ինտերնետային կայքում (www.psrc.am) սպասարկման որակի վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունների հրապարակումը:

Բնական գազի մատակարարի կողմից սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը 2008 թվականին իրականացրել է սահմանված ձևերով «ՆայԲուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն:

Քայլեր են ձեռնարկվում նաև ջրամատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղությամբ: «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նայջրմուղ-կոյուղի» և «Երևան Զուր» ՓԲԸ-ներում

իրականացվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների ներդրման աշխատանքները, և 2006-2008 թվականների ընթացքում ընկերություններից ստացված տեղեկատվության հավաստիության ուսումնասիրութ-յունների արդյունքների հիման վրա լրամշակվել են խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների և դրանց վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը և ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների վերլուծությունն ու հանձնաժողովի ինտերնետ կայքում (www.psrc.am) սպասարկման որակի վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունների հրատարակումը:

2008 թվականին հանձնաժողովն ուսումնասիրել է «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացը, որի ընթացքում գնահատվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ ընկերությունում կիրառվող ընթացակարգի համապատասխանությունը էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված պահանջներին և նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման առնչությամբ փետրվարի 1-ից հետո ընկերություն ներկայացված դիմումների ընթացքը, և ներկայացվել է վերլուծական տեղեկանք: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված խախտումների համար «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն նախազգուշացվել է: Ընկերությանը հանձնարարվել է վերացնել հայտնաբերված թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովին:

2008 թվականին հանձնաժողովն իրականացրել է նաև «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում սպառողների հետ տարվող աշխատանքների կազմակերպման վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել է վերլուծական տեղեկանք և առաջարկություններ «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ այդ աշխատանքների բարելավման վերաբերյալ:

Կենցաղային նպատակներով բնական գազի սպառողների ներմային համակարգերի շահագործման անվտանգության մակարդակը գնահատելու նպատակով 2008 թվականին «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ում իրականացվել է շուրջ 1000 բնակիչ-բաժանորդների գազասպառման ներմային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա 2008 թվականին լրամշակվել է բնական գազի սպառման ներմային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման համաձայնագիրը: Նամաձայնագրի լրամշակման արդյունքում սահմանվել է տույժերի կիրառման մեխանիզմ, ինչը կնպաստի մատակարարի

կողմից ներմուծվող համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների լիարժեք կատարմանը:

6. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում

2008 թվականին հանձնաժողովի սահմանած կարգով շարունակվել են կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացները: Նանձնաժողովի որոշումներով համաձայնություն է արվել «Նայասարանի էլեկտրական ցանցեր», «ՆայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերին: Ուսումնասիրվել են ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունների 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և 3 վերլուծական տեղեկանքներ հրապարակվել են հանձնաժողովի կայքէջում:

2008 թվականին շարունակվել է կարգավորվող ընկերությունների կատարած գնումների գործընթացների ուսումնասիրությունը: Ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել «Նայասարանի էլեկտրական ցանցեր», «ՆայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների «ՆրագԶԷԿ» ԲԲԸ-ի և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված գնումների եռամսյակային տեղեկատվությունները, համարվել են տեղեկատվական բազաները:

Նիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսմանը միջոցառումներով կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական արդյունքներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն տեմպերի մասին: 2008 թվականի տարեվերջի դրությամբ հանրապետությունում գործում է 70 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 67-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 89 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 300 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո կայանների գումարային հզորությունը կարող է հասնել 242 ՄՎտ, իսկ միջին տարեկան արտադրանքը՝ 847 մլն կՎտժ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացման միջոցառումներն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կազմել է նաև համապատասխան վերլուծական տեղեկանք և հրապարակել իր կայքում:

7. Նախադրյալիցության բնագավառ

Իրականացնելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՆՆ օրենքով իրեն վերապահված գործառնությունները, հանձնաժողովը 2008 թվականին շարունակել է

աշխատանքներ փոխել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ուղղությամբ:

Մշակվել և հաստատվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնները: Նանրապետության մարզերում անլար հասանելիության կապի ցանցերի սրելծումն ու զարգացումը խթանելու նպատակով փոփոխություն է կատարվել ռադիոհաճախականությունների թույլտվությունների փրամադրման կարգում, մասնավորապես, ըստ մեկ ՄՆԳ ռադիոհաճախականության գոտու, ռադիոմոդեմային կապի ցանցերի համար ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները հանրապետության յուրաքանչյուր մարզի համար իջեցվել են մոտ 8,5 անգամ, ինչի արդյունքում նախորդ փարվա համեմատությամբ մարզերում անլար հասանելիության կապի ցանցերի թիվն աճել է 5 անգամ:

Շարժական կապի երրորդ օպերատորի ընտրության նպատակով հայտարարվել և իրականացվել է միջազգային մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ֆրանս Տելեկոմ» ընկերությունը, և հանձնաժողովը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիա է փրամադրել հաղթող ընկերության հիմնադրած «ՖՏԱ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը, որի համար սահմանվել են կոնկրետ ներդրումային պարտավորություններ:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ազատականացումից հետո խնդիր էր առաջացել ոլորտում մրցակցության համար բարենպաստ միջավայր ապահովել և այդ համարեքսպում կարգավորել ենթակառուցվածքների և ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների գործունեությունը: Այդ կապակցությամբ ընդունվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ին գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր ճանաչելու մասին» որոշումը, որի համաձայն ընկերությունը ճանաչվել է Նայասրանի Նանրապետության ամբողջ փրամադրում հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ (աշխարհագրական սկզբունքով ամրագրված համարագրման ռեսուրսի օգտագործմամբ) գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր: Այնուհետև, մշակվել և հաստատվել են հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից գծերի ենթակառուցվածքների գրնվելու վայրի և առկա թողունակության մասին փեղեկությունների փրամադրման կարգն ու հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին ուղիղ գծերի օգտագործման թույլտվության փրամադրման կանոնները:

Շուկայի ազատականացումից հետո բազմաթիվ անձանց փրամադրվել են ինփերնետի միջոցով ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիաներ: Նանձնաժողովի որոշման համաձայն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պարտավոր է որոշակի

ժամկետներում և սահմանված կարգով գործարկել այդ անձանց փրամադրված հեռախոսահամարները, սակայն մի շարք դեպքերում ընկերությունը որոշմամբ ամրագրված իր պարտավորությունների կապարման ընթացքում թույլ է փոխել խախտումներ, որոնց պատճառով ենթարկվել է փուլով՝ շուրջ 32 միլիոն դրամի չափով:

Ռադիոհաճախականությունների փիրույթների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդունվել են ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության փրամադրման համար մրցույթի կազմակերպման կանոններ և սահմանվել մրցույթով փրվող ռադիոհաճախականությունների ցանկը:

Նանձնաժողովը մոնիթորինգ է անցկացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ում, որի ընթացքում ուսումնասիրվել է CDMA փեխնոլոգիայի կիրառմամբ մատուցվող հեռախոսային ծառայությունների որակը Արարափի, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում, ինչպես նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի CDMA կենտրոնական կայանում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ CDMA փեխնոլոգիայի ներդրմամբ կապի ծածկույթի ընդլայնման հետևանքով հանրապետությունում ավելացել է թվային հեռախոսակապով ապահովված բնակավայրերի քանակը, և էականորեն նվազել են հեռախոսակապի որակի վերաբերյալ բաժանորդների դժգոհությունները:

CDMA փեխնոլոգիայի կիրառմամբ մատուցվող հեռախոսակապի վերաբերյալ հանձնաժողովը որոշմամբ պաշտոնապես պարզաբանել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, հեռախոսագծի փեղադրման ծառայության հաստատված սակագնի սահմաններում, պարտավոր է անհատույց օգտագործման իրավունքով բաժանորդներին փրամադրել վերջնակերպային սարքավորում կամ կցորդիչ:

Ելնելով հանրային շահի և ազգային անվտանգության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է բջջային կապի բաժանորդների հետ գրավոր պայմանագրերի վերակնքման պահանջ, որի հիման վրա 2008 թվականի ընթացքում բոլոր գրավոր պայմանագրերը վերակնքվել են:

Գործուն միջոցներ են ձեռնարկվել փվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների ոլորտի կարգավորման ուղղությամբ: Մասնավորաբար, միջազգային IP փարանցման ծառայությունների շուկայում առկա սակագնային անհամամասնությունները կարգավորելու նպատակով, հանձնաժողովի միջամտության շնորհիվ «ԱրմենՏելի» կողմից մատուցվող 1 Մբիթ/վ արագությամբ միջազգային IP փարանցման ծառայության ամսական սակագինը շուրջ 4000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամից նվազեցվել է մինչև 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի:

WiMAX փեխնոլոգիայի հիման վրա «Կոռնետ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից հանրապետության ողջ փարածքում մատուցվել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ, որին հաջորդել է նաև «Այքան Քոմյունիքեյշնզ» ՓԲԸ-ն՝ WiMAX փեխնոլոգիայի հիման վրա 2009 թվականին Երևան քաղաքում մատուցելով համանման

ծառայություններ: 2009 թվականի ընթացքում ակնկալվում է նշված փեխնոլոգիայի հիման վրա երրորդ օպերատորի՝ «ԱՍՏՎԶ» ՓԲԸ-ի մուտքը շուկա:

Տվյալների հաղորդման և ինֆերնետր հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից հրապարակային պայմանագրերի հիման վրա բաժանորդներին մատուցվող ծառայությունների սակագների և մատուցման պայմանների թափանցիկությունը, միաբեասակ կիրառումն ու հասանելիությունն ապահովելու նպատակով, մշակվել և ընդունվել է փվյալների հաղորդման և ինֆերնետր հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգ:

Նպատակ ունենալով վերլուծել և կանոնակարգել փվյալների հաղորդման և ինֆերնետր հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից հանրապետությունում շրջանառվող տեղեկատվության ծավալները և տեղեկատվական հոսքերի թողունակությունը, ինչպես նաև այդ ծառայությունների շուկայում առողջ մրցակցային միջավայրի կայացումը երաշխավորելու համար, մշակվել և հաստատվել է փվյալների հաղորդման և ինֆերնետր հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևը:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ազատակացումից հետո իրականացված կարգավորիչ բարեփոխումների շնորհիվ ոլորտում նկատվում է գործարար ակտիվության զգալի աճ: Այսպես, 2008 թվականի ընթացքում հանձնաժողովը փրամադրել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի՝ 24, ձայնային ծառայությունների մատուցման՝ 67, փվյալների հաղորդման և ինֆերնետր հասանելիության ծառայությունների մատուցման 22 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման 91 և համարների զբաղեցման 64 թույլտվություն, որոնց հիման վրա պետական բյուջե են գանձվել շուրջ 38,9 մլն դրամ փարեկան պետական փուրք, 8 մլն դրամի չափով փույժեր և շուրջ 5 302 մլն դրամ ռադիոհաճախականությունների թույլտվությունների փրամադրման և ռադիոհաճախականությունների օգտագործման վճարներ:

8. Աշխատանքը սպառողների հետ

2008 թվականին շարունակվել են սպառողների հետ փարվող ամենօրյա աշխատանքները: Տարվա ընթացքում սպառողներից սփացվել են 1014 հարցադրումներ և բողոքներ, որոնցից 213-ը՝ գրավոր, 801-ը՝ հրապարակ հեռախոսով և սպառողների ընդունելության ընթացքում: Դրանցից 535-ը դրական լուծում են սփացել, 20-ի վերաբերյալ մատակարար կազմակերպություններում անց են կացվում ուսումնասիրություններ, 42 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապարասխանել իրականությանը, 403-ի վերաբերյալ փրվել են պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն:

Սպառողների բողոքները փեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի մատակարարների հետ համարեղ իրականացվել են սպուգայցեր, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

9. Գործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ

Նաշվետու փարվա ընթացքում շարունակվել է հանձնաժողովի փոխգործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ: Նանրային ծառայությունների խնդիրներով և զարգացման հեռանկարներով զբաղվող լրագրողները, օգտվելով կայքէջում փեղադրված և շարունակաբար թարմացվող փեղեկափությունից, հանրության քննարկմանն են ներկայացրել վերլուծական բնույթի հոդվածներ՝ դրանով իսկ հանրությանը իրագեկ դարձնելով հանձնաժողովի գործունեությանը:

Ավանդույթի համաձայն, հանձնաժողովի նիստերի ավարտից հետո հավելյալ պարզաբանումներ ստանալու համար լրագրողներին փրվել է հնարավորություն անցկացնելու ճեպագրույցներ հանձնաժողովի աշխատակազմի և հրավիրված ընկերությունների պատասխանատուների մասնակցությամբ:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաև փրպագիր մամուլի միջոցով հանձնաժողովը հետևողաբար ծանուցումներ և հաղորդագրություններ է ներկայացրել հանձնաժողովի նիստերի եւ հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Սպառողների իրավունքների իրագեկման մակարդակի բարձրացման նպատակով հանձնաժողովի համապատասխան մասնագեները փարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով և պարզաբանումներով:

Նանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական փեղեկափությունները հրապարակվել են մամուլում, սփռվել էլեկտրոնային փոստով, համացանցով: Տեղեկափության փարածումն ընդգրկել է հանրապետության ողջ փարածքը: Եվ պատահական չէ, որ 2008 թվականին էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխության ժամանակ հանձնաժողովի կայքը արժանացել է առաջին կարգի մրցանակի:

10. Նամագործակցություն

Նանձնաժողովը, 2008 թվականին համագործակցելով Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների փարածաշրջանային ընկերակցության (ERRA), ԱՊՏ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ-ի էներգետիկայի ընկերակցության, INOGATE

միջազգային կազմակերպության հետ, իրականացրել է կարգավորման բնագավառներում հանրային ծառայությունների մատուցման փորձի ուսումնասիրություն:

Նանձնաժողովի մասնագետները 2008 թվականին մասնակցել են Էներգետիկայի կարգավորող մարմինների փարաձաշրջանային ընկերակցության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համարել կազմակերպված բնական գազի ու կենտրոնական ջեռուցման շուկաների կարգավորման հիմունքների և էլեկտրաէներգիայի շուկաների աուդիտորական արագացված դասընթացներին, գնագոյացման և սակագների կոմիտեների հերթական նիստերին, իրավական կարգավորման աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը, ինչպես նաև Էներգետիկայի կարգավորողների ասոցիացիայի 2008 թվականի ընդհանուր ժողովին և կոնֆերանսներին:

Նանձնաժողովի մասնագետները մասնակցել են նաև ԱՊՏ մասնակից երկրների համագործակցության ռազմավարության իրականացման աշխատանքային խմբի, ինչպես նաև Էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի նիստերի աշխատանքներին:

Միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի մասնագետները մասնակցել են INOGATE միջազգային կազմակերպության աջակցությամբ անցկացված «Էներգաարդյունավետության, էներգիայի վերականգնվող աղբյուրները և պահանջարկի կառավարումը» թեմայով սեմինարին, «Անցյալի ուսումնասիրում և հետագա քայլերի որոշում» կլոր սեղանին:

Նանձնաժողովի մասնագետները 2008 թվականին կատարել են ուսումնական այց Օհայո նահանգ՝ մասնակցելու բնական գազի ծառայությունների մատուցման որակի մոնիթորինգի վերաբերյալ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից կազմակերպված սեմինարին, իսկ Թաիլանդի Պատրայա քաղաքում մասնակցել են Նեոս-հաղորդակցության միջազգային միության կազմակերպած ՆՄՄ անդամ երկրների կարգավորող կազմակերպությունների ամենամյա՝ հեռահաղորդակցության ցանցերի ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների համարել օգտագործմանն առնչվող խնդիրների վերաբերյալ համաշխարհային համաժողովին:

ՎՎ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008թվականի գործունեության ֆինանսավորման հասարակված բյուջեի, տարեկան ճշգրիտ բյուջեի, ֆինանսավորման, դրամարկղային ծախսի, փաստացի ծախսի մասին

/N^o 1/2008 Ն/

Վոդ/հա մ	Բյուջեդարային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Վաստակ ված բյուջե	Նախահ աշխույժ կատարվ ած փոփոխո ւթյունն ը	Ճշգրիտ բյուջե	Ֆինանսավ որում	Դրամարկ ային ծախս	Փաստացի ծախս
	ԱՄՆ ԸՆԿՆ	403369,2	0,0	403369,2	399822,9	398875,8	400497,8
411100	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	310284,0		310284,0	310284,0	310223,6	310222,9
413100	Պարտավարձի սոցիալական ապահովագրության վճարներ	32384,8		32384,8	31285,7	30399,0	31097,0
421200*	Էներգետիկ ծառայություն /գազ, էլ.էներգիա/	5745,9	-1250,0	4495,9	4495,9	4495,9	4924,3
421300	Կոմունալ ծառայություն /ջուր, աղբահանություն/	380,0	-170,0	210,0	210,0	210,0	180,8
421400	Կապի ծառայություն / հեռ.կապ, իրպեկ, ռադիո, փոստ/	7208,0	-1360,0	5848,0	5848,0	5848,0	6344,4
422100	- հանրապետության ներսում	1580,0		1580,0	1044,2	1044,2	1044,2
422200	- արքայազնության	8850,0	-2792,0	6058,0	5453,2	5453,2	5453,2
423400	Տեղեկատվական ծառայություն / թերթեր, ամսագիր, հայտարարությունների տպագրություն	720,0	50,0	770,0	770,0	770,0	798,6
423700	Ներկայացուցչական ծախսեր	700,0	-480,0	220,0	220,0	220,0	220,0
423900	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	581,4		581,4	581,4	581,4	581,4
425100	Շենքի ընթացիկ նորոգում	900,0	-200,0	700,0	615,0	615,0	615,0
425200	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգում ավտոմեքենաների, հովազման համակարգի, համակարգչային տեխնիկա	3800,0	-200,0	3600,0	2957,3	2957,3	2957,3
426100	Գրասենյակային նյութեր	5425,1		5425,1	5292,7	5292,7	5293,2
426400	Տրանսպորտային նյութեր/բենզին, անվադողեր, հակասառիչ հեղուկ, յուղ տեխ.սպուգում	7710,0		7710,0	7275,8	7275,8	7275,8
426700	Կենցաղային և հանրային աննդի նյութեր	700,0		700,0	700,0	700,0	700,0
426900	Դրամաշնորհներ	1500,0	-48,0	1452,0	1452,0	1452,0	1452,0
482300	Այլ ծախսեր	100,0		100,0	100,0	100,0	100,0
512100	Տրանսպորտային սարքավորումներ	11000,0	6450,0	17450,0	17450,0	17450,0	17450,0
512200	Վարչական սարքավորումներ	3800,0		3800,0	3787,7	3787,7	3787,7